

ՀՀ ՔԱՂԱՔԱՇԻՆՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐ Վ. ՎԱՐԴԱՆՅԱՆԻ ԵԼՈՒՅԹԸ
ՍՊԻՏԱԿՈՒՄ ԲՆԱԿԱՐԱՆԻ ՀԱՎԱՍՏԱԳՐԵՐ ՀԱՆՁՆԵԼՈՒ
ԿԱՊԱԿՑՈՒԹՅԱՄԲ

Մեծարգո պարոն նախագահ

Հարգելի ներկաներ

Միբելի սպիտակցիներ

Այսօր մենք այստեղ ենք շատ ուրախալի առիթով: 165 անօթեւան ընտանիք հիմա կստանա իր այնքան սպասած տան հավաստագիրը: Դա, իհարկե, ամբողջը չէ. դուք տեսնում եք, որ այստեղ, Սպիտակի նոր թաղամասում կառուցված է 220 անհատական բնակելի տուն, եւ եւս 55 ընտանիք շուտով կապահովվի բնակարանով:

Ընդհանուր առմամբ Սպիտակում կառուցվելու է առնվազն 354 անհատական բնակելի տուն ու սպասարկման օբյեկտ, իսկ Լոռու մարզի 24 գյուղական բնակավայրերում՝ առնվազն 1821 անհատական բնակելի տուն: Շինարարություն է իրականացվում նաեւ Շիրակի մարզում, եւ ծրագրի ավարտին մենք կունենանք նորակառույց, ամուր ու գեղեցիկ 2583 բնակելի տուն 226 հազ. ք.մ. ընդհանուր մակերեսով, իսկ Գյումրիում կառուցվել եւ կառուցվում են 59 բազմաբնակարան շենքեր՝ 212 հազար ք.մ. ընդհանուր մակերեսով:

Ուզում եմ հատուկ ընդգծել, որ մեր պետությունը անգամ համաշխարհային ֆինանսատնտեսական ճգնաժամի պայմաններում, երբ նույնիսկ բազմաթիվ հզոր եւ հարուստ պետություններ ստիպված էին կասեցնել սոցիալական ծրագրերը, Հայաստանի Հանրապետությունը, նախագահ Սերժ Սարգսյանի գլխավորությամբ, ոչ մի դրամով չնվազեցրեց աղետի գոտու շինարարությանը հատկացվող գումարները:

Աղետի գոտու վերականգնման խնդիրը հանրապետության նախագահի ամենօրյա ուշադրության կենտրոնում է, եւ ես չեմ հիշում մի դեպք, երբ մենք ունենանք որեւէ դժվարություն, եւ նախագահն անմիջապես օպերատիվ արձագանք ու լուծում չտա խնդրին:

Մեծարգո պարոն նախագահ

Միրելի լոռեցիներ

Զեկուցում եմ, որ մենք անելու ենք հնարավորը՝ աշխատանքը բարձր որակով եւ ժամանակին իրականացնելու համար: Վստահ եմ, որ անօթեւան ընտանիքներին բնակարանով ապահովելու ծրագիրն իրականացվելու է ժամանակացույցին համապատասխան, եւ մենք չենք հանգստանալու, մինչեւ աղետի գոտին լիովին չվերականգնվի:

Ես ուզում եմ կրկին ջերմորեն շնորհավորել բոլորիս՝ այս նշանակալից իրադարձության կապակցությամբ: Անցած ամսվա ընթացքում նաեւ այս թաղամասի հարյուրավոր բնակիչներ միացան ծառատունկին, որին մասնակցում էին հասարակական կազմակերպություններ, պատգամավորներ ու կառավարության անդամներ: Թաղամասում տնկվեց մոտ 13 հազար ծառ ու թուփ: Մաղթում եմ, որ շարունակեք ու զարգացնեք այդ գեղեցիկ ավանդույթը, կանաչապատեք ու շենացնեք ձեր գեղեցիկ թաղամասը, մաղթում եմ, որ այս բարեկարգ խաղահրապարակներում լսվի մանուկների ծիծաղ ու խինդ, որ ձեր տներում տոնեք կնունքներ, ծնունդներ ու հարսանիքներ:

Շնորհակալություն: